ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

N 22/12

Քաղ. Երեւան 27 նոյեմբերի 2012թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) հետևյալ կազմով՝ խորհրդի նախագահ Ա.Ֆ.Ազիզյան, անդամներ՝ Ա.Ս.Խաչիկյան, Ա.Ա.Տոնիկյան, Ա. Վ. Բաբայան, Ա.Հ. Աբգարյան, Ա.Գ. Շահինյան և Ա. Ի.Ղարիբջանյան (քարտուղար) իր 2012թ. նոյեմբերի 27-ի նիստում (արձանագրություն N 8.3) քննարկեց «Արտէքսիմ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Ա. Նազարյանի կողմից 2012թ. նոյեմբերի 13-ին ներկայացված «Foie Gras NOYAN TUN RESTORANT» (20120716) համակցված ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Մերժման հիմք են հանդիսացել «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, 2-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետը և ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 18-ի N 1538-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի 127–րդ կետը, համաձայն որոնց որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում հայտարկված «NOYAN TUN» ապրանքային նշանը չի կարող գրանցվել, քանի որ այն շփոթելու աստիճան նման է ավելի վաղ առաջնությամբ արդեն գրանցված «ՆՈՅԱՆ» («Եվրոթերմ» ՓԲԸ, Երևան, Ամիրյան 15ա, N 8413, 14151) ապրանքային նշաններին: Համակցված նշանների նմանությունը որոշելիս հաշվի է առնվում դրանց մեջ առկա բառային տարրերի նմանության հարցը առանձին վերցված: Տվյալ դեպքում համեմատվող նշաններում բառային տարրը հանդիսանում է առաջնային ընկալման տարր, որի վրա էլ ընկնում է տրամաբանական շեշտադրումը: Վերոնշյալ ապրանքային նշաններում տրամաբանական շեշտադրումը ընկնում է է «ՆՈՅԱՆ» տարբերակող բառի վրա:

Բողոքարկողը նշել է, որ մերժման որոշման հետ համաձայնվել չի կարող, քանի որ ապրանքային նշանը հայտնի է հայ սպառողին իր յուրատիպությամբ: Բողոքում նշված է, որ «ՆՈՅԱՆ ՏՈՒՆ» ռեստորանը գործում է 2009թ. և «ՆՈՅԱՆ ՏՈՒՆ» արտահայտությունը որպես ապրանքային

նշան սկսել է օգտագործվել նշանի գրանցումից անմիջապես հետո 04.06.2009թ. (գրանցման համար 14265)։ Ավելի քան երեք տարի է ինչ ռեստորանն արտադրում է իր բադի լյարդով պաշտետը և այն այնքան մեծ համբավ է ձեռք բերել իր սպառողների շրջանում, որ ռեստորանը պարբերաբար ստանում է պատվերներ։ հայտարկվալ ապրանքային նշանը ստեղծվել է այդ նպատակով։ Նոյան տուն արտահայտությունը 35, 41 և 43-րդ դասերի համար գրանցվելիս (գրանցման համարներ 14265, 17992, 17994) ՆՈՅԱՆ ապրանքային նշանների գրանցումները չեն հակադրվել։ Բողոքարկվող ապրանքային նշանը պիտակ է, որը նախատեսված սագի լյարդի պաշտետի համար։ Պիտակի բոլոր հիմնական մասերում հստակ նշված է «ՆՈՅԱՆ ՏՈՒՆ ՌԵՍՏՈՐԱՆ» , Foie Grass de conard au cognac NOYAN TUN RESTORANT արտահայտությունները։ Այսինքն պիտակի վրա հստակ երևում և ընդգծվում է, որ արտադրանքը հանդիսանում է «ՆՈՅԱՆ ՏՈՒՆ» ռեստորանի արտադրանքը։ Հետևաբար սպառողը երբեք չի շփոթի այդ ապրանքային նշանով մակնշված արտադրանքները Եվրոթերմ ընկերության արտադրանքերի հետ, քանի որ սպառողին մոլորության մեջ գցելու հավանականություն չկա։ Շփոթության հավանականություն չի կարող առաջանալ նաև մի պարզ պատճառով, քանի որ հայտարկվող ապրանքը լայն սպառման արտադրանք չէ, բացի այդ ռեստորանը ևս չի կարող տալ լայնածավալ արտադրանք, որպեսզի բավարարի սպառողների լայն զանգվածին։ Նշված է նաև, որ բողոքարկվող ապրանքային նշանի վրա հստակ երևում է, որի արտադրանքը Նոյան տուն ռեստորանի արտադրանքն է։

Բողոքարկողը, հիմնավորելով իր բողոքը, խնդրում է վերանայել փորձաքննության որոշումը և գրանցել բողոքարկված համակցված ապրանքային նշանը «Foie Gras NOYAN TUN RESTORANT» (20120716) «բադի լյարդի պաշտետ ապրանքների համար»:

Կոլեգիայի անդամը՝ բողոքը ներկայացնելիս նշեց, որ 2012թ. նոյեմբերի 13-ին «Արտէքսիմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է «Foie Gras NOYAN TUN RESTORANT» (20120716) համակցված ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության դեմ բողոք:

Համառոտ ներկայացվեց ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին հիմքերը, ինչպես նաև բողոքի համառոտ բովանդակությունը: Նշվեց, որ բողոքում բերված են մանրամասն համեմատականներ գրանցված և բողոքարկվող նշանների միջև, ինչպես նաև արձանագրվեց, որ բողոքարկողը համաձայն է, որ ապրանքային նշանը գրանցվի միայն 29-րդ դասի «բադի լյարդի պաշտետ» ապրանքների համար:

Հիմք ընդունելով վերոհիշյալ նոր հանգամանքը՝ կոլեգիան առաջարկեց բողոքարկված ապրանքային նշանը գրանցել:

Ընդհանուր քննարկման արդյունքում, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների եւ դիմումների ներկայացման եւ քննարկման կարգի» 68-րդ կետի 1-ին ենթակետով բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Բողոքը ամբողջությամբ բավարարել, ապրանքային նշանի նախնական մերժման մասին Գործակալության 24.09.2012թ. և կրկնական փորձաքննության՝ 12.11.2012թ. որոշումները չեղյալ ճանաչել և գրանցել «Արտէքսիմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված «Foie Gras NOYAN TUN RESTORANT» (20120716) համակցված ապրանքային նշանը 29-րդ դասի «բադի լյարդի պաշտետ» ապրանքի համար:

Բողոքարկման խորհրդի

նախագահ Ա. Ազիզյան